


1113

٢٠٠٦





Տ. ԳԻՐԻՆ

թ. 11 ր. 3.

Լ. Վ. 6.

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 1 ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄ. 19/2 ԴԵԿՏ. 1907

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
ԿՂԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Պոլիս, Պապ Բ Ալի ճաճրէսի
թիւ 38. Զ. Պէրպէրեան տպարան

Զեռէ կը ծախուի 40 փր.
Հեռաւոր Բաղաճներու եւ Ար-
տասանմանի համար միայն ե-
ռամսեան 13 փր.

درخت


رسالة موقوتة از منیجه و ترکیجه

سی. اسی، علمی، ادبی و اخلاقی


صاحب امتیاز و مدیر مسئول

کاهن مس دادریان

باب عالی جاده سنده بر بریان مطبعه سی



Տպագր. ԶԱՐԵԱՆ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԿՂԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

Պոլիս, Պապ ր Ալի նասրէսի
թիւ 38. Զ. Պէրպէրեան տպարան

Զեռֆէ կը ծախուի 40 փր.
Հեռաւոր փաղաֆեռու եւ Ար-
սասանմանի համար միայն ե-
ռամսեան 13 դր.

درخت

رسالة موقوتة ارمنيجه وتركيجه

سی-اسی، علمی، ادبی و اخلاقی

صاحب امتیاز و مدیر مسئول

کفهمس دادریان

باب عالی جاده سنده بر بریان مطبعه سی

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 1

ՈՒՐԲԱԹ, ՆՈՅԵՄ. 19/2 ԴԵԿՏ. 1909

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ, ՆՊԱՏԱԿ ԵՒ ՊԱՅՄԱՆ

ԴՐԱՆՏԸ՝ բացարձակապէս Հասարակական անկաշառ եւ անկաշկանդ օտկան է, Հայ համայնքին այժմու կարիքին ու պահանջմանց գոհացում տուող, որուն մէջ ոյժ պիտի տանք ի մասնաւորի Հայ ժողովուրդին բարոյական, կրթական եւ տնտեսական զարգացման գործին, Ազգային եւ մի- ջազգային համերաշխութեան, միութեան եւ համագործակ- ցութեան կենսական ձեռնարկին, որոնցմէ կախում ունին խաղաղութիւն, զարգացում եւ յառաջդիմութիւն այս երկրին մէջ: Պիտի աշխատինք որ, մեր թերթին պարունակութիւնը համաձայն ըլլայ հայրենիքին պէտքերուն եւ Հայ հասարա- կական կեանքին զարգացման աստիճանին:

ԴՐԱՆՏԻՆ մէջ պիտի երևին արձակ եւ ոստանաւոր գե- ղեցիկ գրական արտադրութիւններ, իմաստասիրական, բա- րոյական, ընտանեկան, ընկերական, առողջապահական

լուրջ յօդուածներ, քաղաքական ամփոփ լուրեր, ամենէն հետաքրքրաշարժ և սրտառուչ վէպեր, իրական կեանքէ պատմութիւններ, իմաստալից համառօտ ընտիր ընտիր ասուցողածներ, ժողովրդական բարոյալից առակներ, մանաւանդ առածներ, գուարճալի կամ զուեշտալի գրութիւններ, տեսակ տեսակ հանելուկներ, լաւագոյն կտորներ բոլոր թերթերէն, վերջապէս հաճելի պէսպիսութիւններ, զանազանութիւններ ԴՐԱՍԻՆ սեփականութիւններն են:

ԴՐԱՍԻՆ Հայերէն և թէ հայատառ Տաճկերէն կը հրատարակուի, մասնաւոր առաւելութիւն մըն է այս, և թէ համակ նորութիւն մը իր տեսակին մէջ: Ուզեցինք այդպէս ընել, որպէսզի, հայախօսներ և թրքախօսներ փոխն ի փոխ օգտուին, որով՝ կը յուսանք ԴՐԱՍԻՆ ամէն դասակարգի կարելի եղածին չափ գոհացում պիտի կրնայ տալ, ամէն հասակի և ճաշակի համար օգտաւէտ նիւթեր կարելի պիտի ըլլայ գտնել հոն: ԴՐԱՍԻՆ նաև պատկերազարդ հանդէս մ'է: Նպատակ. — ԴՐԱՍԻՆ ո՛չ կրօնական է և ո՛չ կուսակցական, այսինքն, ԴՐԱՍԻՆ՝ կրօնական և կուսակցական վէճերու և կռիւներու հանդիսավայրը հանդիսանալու հանդէս մը չէ, եթէ ոչ մեծ յարգանք կը տածենք կրօնքի և կուսակցութեանց հանդէպ: Կրօնքով և լեզուովն է որ Հայ ազգը իր ինքնութիւնը կրցած է պահել ցարդ ամէն հալածանքի և տառապանքի դիմագրուելով, ասկէ ետքն ալ իրական ազատութիւնը պիտի կրնայ ձեռք բերել իր ճշմարիտ բարոյականի, յեղափոխականի-ընկերականի կեանքով և ընթացքով: Նուիրական է մեզ ճշմարիտ կրօնք և յեղափոխութիւն. չենք կրնար իրարմէ անջատել: Երբ առիթը ներկայանայ ճշմարիտ յեղափոխականներու գործունէութեան վրայ պիտի գրենք շատ բաներ:

Ժողովրդեան իրաւունքը բռնաբարողներու, ճշմարտութեան և արդարութեան հակառակ գործողներու դէմ պիտի բողոքենք, պիտի քննադատենք, պիտի կուլինք: Կէտ նպատակի ունինք ծառայել ազգին և հայրենիքին՝ մեր կարողութեան չափով, ի հարկին մեր շահը և կեանքը զոհելու պատրաստ գտնուելով, ճշմարտութիւնը պիտի չխեղաթիւրենք, պիտի չի ծածկենք. անճնական շահու համար պիտի չի խոնարհինք պիտի չքծնինք զօրաւորին և հարուստին առջեւ, պիտի չը

վախնանք. այս է մեր սկզբունքը, լաւ եւս, սկզբունքէն աւելի մեր նկարագիրը:

ԴՐԱՒՏԻՆ մէջ լայն բաժին մը պիտի յատկացուի նորահաս գրիչներու գեռափթիթ արտադրութեանց: ԴՐԱՒՏԸ երկսեռ գեռահասներու ռահվիրան ու քաջալերիչը պիտի հանդիսանայ անոնց ճաշակին համապատասխանող գրութիւններով: Անոնք որ կը փոփաքին ընթերցանութեան ընդհանրացման, մանաւանդ օգտակար և շահեկան նիւթերու ընթերցումով նոր սերնդեան մտաւորական և բարոյական կեանքի մակարդակին բարձրացման, քաջայայտ ենք որ զօրաւիճ եւ պաշտպան պիտի կանգնին մեզի իրենց բարոյական և դրական օգնութեամբ մեր այս խոնարհ ձեռնարկին մէջ: Ազգին յոյսը ապագայ սերնդեան վրայ կը մնայ. սերունդ մը որ, օժտուած պէտք է ըլլայ նկարագիրով, բարեկրթութեամբ, իմաստութեամբ և հարստութեամբ. հետեւաբար, ազգին զաւակներուն լուազոյն կրթութիւն ջամբելու և նկարագիր պատրաստելու պէտքը չեչտող այսօրինակ պարբերական մը ապրեցնելու գործը՝ դրական արդիւնքը պիտի ըլլայ ձեր զգացմանց, քաջալերութեանց եւ գնահատմանց:

Ընթերցողներ պէտք չէ անգիտանան որ, ամէն լրագիր նիւթական և բարոյական մեծամեծ զոհողութիւններով եւ աշխատութիւններով ի լոյս կը տեսնէ: Մենք ամէն տեսակ քաջալիրութիւն ու ձեռնտութիւն մանաւանդ զաւառացի ազգայիններէն կ'ակնկալենք. սիրելի է մեզ հաւատալ թէ ընթերցանութեան տեսչը աւելի է անոնց մէջ:

Կը վայլէ որ ամէն հայ ընտանիք ու ամէն հայ վարժարան ամէն ատեն ստանայ ԴՐԱՒՏԸ, իրենց միջավայրը դրախտի վերածելու համար. ԴՐԱՒՏԸ պէտք է ընդունելութիւն գտնէ ամէն սեմէն ու ամէն միջավայրէն ներս:

ԴՐԱՒՏ՝ առ այժմ այս ձեւով պիտի հրատարակուի, յետոյ կ'ընայ բարեփոխուիլ: Առ այժմ շարաթը մէկ անգամ. երբ յաջողութիւն գտնէ, մինչեւ երեք անգամ պիտի կըրնանք հրատարակել:

Պայման. — ԴՐԱՒՏԸ՝ տարեկան կանխիկ բաժանորդագրութեան դրութիւն չունի, այս տեսակէտով ալ նորութիւն մըն է: Միայն հեռաւոր քաղաքներու և արտասահմանի մէջ

գտնուող ազգայիններ՝ ԴՐԱՍԸ ստանալու համար առէն եւ
աւամսեան կանխիկ պիտի վճարեն 13 դր. : Այսքան :

Իսկ Պոլսոյ մէջ , ինչպէս նաեւ Պոլսոյ շրջակայ քաղաքներու
նաեւ գիւղերուն մէջ ձեռքէ պիտի ծախուի հատը 40 փր.ի .
փափաքողներ , համակրողներ՝ մեր գործակալներու և ցրուիչ-
ներու ձեռքէն կանխիկ պիտի առնեն ամէն անգամ մէկ դա-
նեկան վճարելով :

Բայց ԴՐԱՍԸ յատուկ մէկ երկու մասնաւոր ցրուիչներ
ունինք , մեր ցոյց տուած հասցէներուն թերթ տանելու հա-
մար , ի Պոլիս Առաջին թիւերը ընդունողները քեր չեն ու-
զեր շարունակ առնել , թող հաճին միւս անգամ տնոնց ար-
ժէքը տալ և ապա իրենց տրամագրութիւնը յայտնել :

Կանոնաւորապէս բաժանորդագրուիլ ուզողներու հաս-
ցէին կրնանք փոսթով ուրոյն թերթ ղրկել . բայց այդպիսի-
ները պէտք է հռամսեայն կանխիկ վճարեն , ուր որ ալ ըլլան :

Մեր գործակալները պարտին ամէն շաբաթ իրենց հաս-
ցէին յղուած թերթերուն դրամը անմիջապէս ուղարկել մեզ .
երբ երկու շաբաթ դրամական յապաղում տեղի ունենայ ,
ԴՐԱՍԸ ին առաջումը իսկայն կը դադրի :

Դրամները կրնան ղրկուիլ ամէն ատեն , մէկ դահեկան-
նոց նամակի փուլերու վերածուելով կամ մանտա փոսթով :
Յաջողութիւնը Աստուծակ :

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
ԿՂԵՄԷՍ Մ. ՏԱՅՐԵԱՆ

Ի Ն Զ Ո՞Ւ ԴՐԱՍԸ

Հիմակուան մեր երկրին ներքին քաղաքական կեանքին
տեսակէտով , արդարեւ , թուրքիան դրախտ ըլլալէն շատ
հեռի է , աւելի դժուարի երեւոյթն ունի բարբարոսութեան
ի գործ դրած աւերներովը , դժոխային արարքներովը : Ներ-
կայ ժամանակին համար , և , ներկայ պարագաներու մէջ ,
հեզնական կը թուի այս անունը , ինչպէս ոմանք հեզնեցին ալ ,
և զարմացան որ , այս անունը ընտրած ենք մեր պարբերա-
կանին համար , և նոյն իսկ բարեկամներէն առաջարկներ
եղան , որպէս զի , փոխեմ այդ անունը , ես տեղի չի տուի սա-

կայն, քանի որ ես ալ ունէի համոզումներ և տեսակէտեր։
Բայց պէտք է աւելցնեմ թէ, Ատանայի զգուելի եղեռնը տե-
ղի ունեցած չէր, երբ այս անուշով արտօնագիր ձեռք բե-
րած էինք գրեթէ անկէ շարաթ մը սուաջ։



ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԱՆՈՒՆՈՎ ՄԿՐՏԵՑԻՆՔ ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Մենք գրախտային ենք։ Դրախտը սիրելի անուն մըն է
մեզի, ո եւ է ազգէ աւելի մենք իրաւունք ունինք այդ ա-
նունը կրելու։ Դրախտը Հայաստանի մէջ էր։ Մեր նախա-
հայրերուն նախորանն է այն։

Մեր պարբերականին ուղղութեան համապատասխան է
այս անունը։ Մեր թերթը՝ երկու լեզուէ է, ու զանազանու-
թիւններ կը պարունակէ։ Բուրաստան և ծառաստան մըն է,
ուրկէ գոյնզգոյն ծաղիկներ ու բազմատեսակ համադամ պը-
տուղիներ կարելի է քաղել։ Դրախտին մէջ ամէն չնաշխարհիկ
էութիւններ գոյութիւն ունին։

Ինչո՞ւ այդ անունէն խրտչինք, այո՛, մեր երկիրը դը-
ժուք եղած է։ Հիմակ ինչո՞ւ չի ջանա՞նք զայն դրախտի
վերածել, ինչո՞ւ մինչեւ վերջը յոռետես ըլլանք այս գեղե-
ցիկ երկրին ապագային, համար։ Որչափ որ ալ բռնապետու-

թիւնը իսկապէս հեռացած չըլլայ, որչափ որ ալ Թուրքիոյ հորիզոնին վրայ դեռ սեւ սեւ ամպեր կուտակուած մնան, տակաւին յուսահատելու չենք բնաւ, ջանանք փարատելու այդ ամպերը: Կ'ապասէիք որ, մէկ օրէն յիշուը դրախտի՞ վերածուեր այս երկիրը հրաշքով: Մենք մեծ հաւատք ունինք այս երկրին ապագային վրայ, ան վերջ ի վերջոյ դրախտի պիտի վերածուի: դրախտով սկսաւ դրախտով պիտի վերջանայ: Մարդիկ են որ զայն դժոխքի կը վերածեն, և, մարդիկ են որ զայն կրկին դրախտի պիտի փոխակերպեն: Հոս պարտականութիւն մը կայ մեր ամենուն համար, և սեր պարտականութիւնն ու պատասխանատուութիւնը ծանր է, քանի այս գեղեցիկ երկիրը այսպէս չարունակուի դժոխք մնալ: Մեր երկիրը՝ մարդկութեան որրան է, առաջին մարդը՝ Աստուած ստեղծեց երկրին գեղեցիկ մասին մէջ, բարեխառն գօտիին մէջ, և այդ բարեխառն գօտիին լեռնային զմայելի հողամասին մէջ: Աստուած իր ստեղծած երկրին վրայ 50 հազար տարի պտըտեցաւ պտըտեցաւ նախամարդը ստեղծելու յարմարագոյն վայրը գտաւ Հայաստանը, և այսպէս առաջին մարդը դրուեցաւ բնութեան այլազան գեղեցկութիւններով օժտուած մէկ կէտին մէջ, որուն Դրախտ անունը կուտան:

Այդ Դրախտը դարերէ ի վեր կորուսած է իր հմայքն ու քմայքը: Ինչպէս առաջին մարդը, նոյնպէս երկրորդ Աստուած մարդը — Քրիստոս, երկրի այս արեւելեան մասին մէջ ծնունդ առաւ, Աստուած կոխեց այս հողին վրայ, և ուր ան կոխեց, մինչեւ վերջը դժոխք չի մնար:

Այս երկիրը այսպէս պիտի չի մնայ: Ուշ կամ կանուխ դրախտի պիտի վերածուի այս աշխարհածանօթ պատմական գեղեցիկ վայրը, Աստուծոյ շնորհքով, բայց մեր ամենուն ջանքով, բարոյական կեանքով ու նկարագիրով, մեր խոհմութեամբ և իմաստութեամբ ու զարգացումով: Եթէ մենք անտարբեր մնանք, ուրիշ յաջորդներ՝ պիտի աշխատին ու պիտի յաջողին ձգտիլ դէպ ի Դրախտ, բայց մենք՝ ծանր պատասխանատուութեան տակ պիտի մնանք մեր ազգին, մարդկութեան խղճին եւ Աստուծոյ առջեւ:

ԽՄԱՍԳՐԱԿԱՆ

ԽՕՍՔԻ ԳՈՀԱՐՆԵՐ

Աշխարհս Ստոյիկեաններու համար մշտնջենական Գիթ-
սեմանի մ'է, իսկ Եպիգիւրեաններու համար Դրախտ մը:
(Գ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ)

Գերեզմանը՝ յուսոյ որրան և անմահութեան դուռն է:
(ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ)

Գթութեան քաղցր ակնարկ առ թշուառ՝
Սրբազան նուագ մըն է անբարբառ:

Ի՞նչ կարողացան շինել Պղատուն, Արիստոտել, Սոգրատ
իրենց իմաստասիրութեան փեթակին մէջ: Յիսուս միայն շի-
նեց կրօնի սուրբ մեղր՝ Գողգոթայի խաչի փեթակին մէջ,
որով քաղցրացաւ հանուր մարդկութեան բերան, որ դառ-
նացած էր Ազամայ ճաշակած պտուղով Դրախտին մէջ:
(ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ)

Յիսուս իրապէս մխիթարեց մեր լացող մայրերը դա-
գաղներու մօտ, բայց երբ ինք կը մեռնէր, իր խաչին քով
չի գտնուեցաւ մէկը որ իր մօրը Մարիամին աչքի արտա-
սուքները սրբէր:
(ԵՂԻՇԷ ՊԱՏՐ. ԴՈՒՐԵԱՆ)

ԱՂԵՐԱ ՄԸ

Առ Խրիմեան Հայրիկ

ՀԱՅՐԻԿ, ըսէ՛, պիտի ներե՞ս, երբոր հիմայ,
Մեր քանդուած ու փլատակ աւերներէն՝
Քեզի ձօնեմ ափ մը մոխիր, ուր կը մըխայ
Հայրենիքի անհուն թախիժը համօրէն:

Հայրի՛կ, ըսէ՛, պիտի ներե՞ս, երբոր հիմայ,
Մեր յորդառատ արցունքներէն ծովատարած՝
Քեզի ձօնեմ կաթիլ մը վիշտ, ուր կը հեւայ
Հայաշխարհին հեծութեան ձայնը անձկայրեաց:



Հայրիկ, խնդրեմ, պիտի ներե՞ս, երբոր հիմայ,
Արիւններու ուղիսինահոս յորձանուտէն՝
Քիչ մը բողոք քեզի զրկեմ ուր կը սըգայ
Վիշտ մը անվերջ... քայց, ա՛հ, ասոնք գիտես արդէն:

Ասոնք գիտես, աւա՛ղ, ասոնք գիտես արդէն,
Ի՞նչ հարկ չեշտ տալ մեր դարաւոր տառապանքին,
Դո՛ւն ալ մեզ հետ չարչարուեցար ամէն ատեն,
Փրկչի մը պէս մեզ ձօնելով կեանքըդ անգին:

Հայրիկ, անշուշտ պիտի ներես, երբոր հիմայ
Քեզ ըսեմ որ, խնդիրք մ'ընես մեր Աստուծոյն,
Թո՛ղ չը թողու որ ժողովուրդը նորէն լայ...
Ա՛լ կը բաւէ. դարման թող տայ մեր վէրքերուն:


Ահ, կիանքի պերճ, պերճ առաւօտ մը կը փնտռենք,
Յաւագարի հիւժախտաւոր բարբառումով:

Հայրի՛կ, գիտե՞ս, արտասուելէն ա՛լ յոգնած ենք:

Բիշ մը ժըպիտ, քիչ մը համբոյր, քիչ մը գորով,
Եւ քիչ մը բոց, և սէր ու կեանք կը յուսանք մենք(*):

ՍԻՐԱ

(*)Այս գեղեցիկ բանաստեղծութիւնը պարունակող գրքոյ-
կին անունն է «Հայի ծակատագրէն» որ կը ծախուի Ինչպաստ
Կիլիկիոյ արկածելոց: Պատրիարքարանի նպաստից Յանձ-
նաժողովի կողմանէ օրինակները վաւերացուած են, Գին 3
դահեկան, գնել փափաքողներ պէտք է դիմեն Դրախտի
վարչութեան կամ Խմբագրութեան, Պէրպէրիան Տպ. Ի Պօլիս:



ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ

Հ Ի Ս Ի Է Ր

ՈՒՂՂՈՒԱՅ ԸՆԴՀ. ՀԱՅ ԱԶԳԻ ԱՆՀԱՏՆԵՐՈՒՆ

Նոր ազատագրուող Թուրքիան հետզհետէ պիտի մտնէ
այնպիսի փուլի մը մէջ որ իւրաքանչիւր ազգի վճռական
բաղձը պիտի որոշուի:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ Բռնակալ ռէժիմին
բացայայտ կերպով պարզուած էր մեր առջեւ, որ ատեն
մենք մինչեւ իսկ արեան գինով կրնայինք զայն պաշտպա-
նել, որքան որ թշնամին առանց ծպտելու մեր կուրծքին կը
ճնշէր ուժգնօրէն:

Ընդհակառակն, ազատ երկիրներու մէջ արտաքնապէս
թէպէտ չի կայ նոյն բացարձակ կռիւը, սակայն վտանգը՝
վտանգ ըլլալէ չի դադրիր, ցորչափ գոյութիւն ունին զօրա-
ւորի և թուրքի, հետեւաբար ճեղքործողի և ազդուողի դերե-
րը: Ստիկա այնպիսի լուրջ խնդիր մըն է որուն վրայ բո-
վանդակ Օսմանցի Հայ անհատներուն լուրջ ուշադրութիւնը
կը հրաւիրեմ:

Աւելորդ չըլլայ թերեւս ըսել թէ, նպատակ չունիմ քա-

բողիւս ոչ անշատողականութիւն և ոչ ալ նեղ ազգայնամոլութիւն. ասոնք բոլորովին տարբեր են այն ուղղութիւնէն՝ զոր ես կ'ուզեմ հոս վեր հանել: Պարզ խօսելով, ներկայ շըրջանին այն ազգը որ իր մայրենի լեզուով նախակրթութիւնէ մը վեր ուսում չի կրնար տալ իր զաւակներուն, անիկա ճակատագրականօրէն դատապարտուած է գահավիժել դէպի ձուլում: Ընդհ. ազգերու պատմութիւնը պրպտելով պիտի տեսնենք թէ հազիւ մէկ քանիներ յաջողեր են իրենց գոյութիւնը ապահովել, և մեծագոյն մասը անհետ կորսուեր է քանսին մէջ:

Եւ այսօր, ուր ազգի մը ճակատագիրը անժխտելիօրէն կապուած է իր լեզուին և գրականութեան հիմնաւոր պահպանումին հետ, մեր տկար մէկ վայրկեանին զօրեղ տարրին մրցակցութիւնը կրնայ զմեզ միեւնոյն վտանգին սուջն դնել: Վասնզի, հակառակը մտածելով. կառավարութիւնը ո՛րքան ալ բարեացակամ ըլլայ ազգերու հանդէպ, չի պահանջուիր որ իւրաքանչիւր հատուածի կարենայ տալ Յոնիայի կրթութիւն մը, հետեւաբար տիրող լեզուն պիտի ըլլայ նաև տիրող ազգայնութիւնը, ու տկարը վտանգուած է միշտ ձուլուիլ զօրաւորին մէջ: Վերջնենք օրինակի համար, Եւրոպայի ամենէն ազատ երկիրներէն Զուիցերիան, ուր տիրող լեզուներն են ընդհանրապէս Ֆրանսերէն և Գերմաներէն լեզուները: Գաղղիախօս Զուիցերիացին ներքնապէս աւելի գաղղիասէր է քան գերմանախօս Զուիցերիացին, և փոխադարձաբար: Այս սկզբունքէն մեկնելով, դժուար չէ գուշակելը թէ պիտի՞գայ շրջան մը ուր պիտի կոտորուի ազգային ինքնաճանաչութեան ոգիին գոյութեան վրայ, ու այն ատեն ինքզինքնիս պիտի գտնենք ահեղ իրականութեան մը առջեւ:

Ներկայիս Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցող մէկ երկու երկրորդական վարժարաններ շատ մասնակի կերպով կրնան ծառայել իրենց նպատակին, վասն զի հռոմէն Անատոլոսի մէջ կայ հայութեան ստուար զանգուած մը — ծարաւի գիտութեան — որ իր պապակը յագեցնելու համար անհրաժեշտօրէն պիտի ստիպուի օտարին քով խնդրել՝ ինչ որ կը պակսի իրենին մօտ:

Արդ, ի՞նչ կրցանք ընել ցարդ Սահմանադրութեան վերահաստատումէն ի վեր: Միացեալ Ընկերութիւնը այս նպա

տակով թէպէտ միակն է իր դերին մէջ, սակայն ստիպուած ըլլալով կարելի եղածին չափ հասնիլ հոն՝ ուր անմիջական պէտք կայ, օգտակարութեան չափը չի կրնար զօրել մեր բաղձացած նպատակին:

Ուրեմն, ի՞նչ պէտք է ընենք. ահա՛ խնդիրը, որ իսկապէս ներկայ հրաւերիս առանցքը կը կազմէ:

Հիմ ունենալով թուրքիոյ Հայ ազգաբնակչութիւնը իբր 2 միլիոն հազի մ'առաջարկեմ.

Ա. Առանց սեռի խտրութեան իւրաքանչիւր անհատի վրայ դնել բաժանորդագրութիւն մը, վեցամսեայ բաժանուն փառա, չքաւոր ընտանիքներու և գաւառներու բաժինը բաշխման օրէնքով բեռնաւորել կարող ընտանիքներու և գաւառներու վրայ:

Բ. Գոնձումը շարունակել տասը տարի:

Գ. Գոյացած դրամը ազգին անունով աւանդ ձգել օսմանեան կամ եւրոպական հաստատուն դրամատան մը մէջ և չահագործել (*):

Դ. Դրամները տեղաւորելու հոգը յանձնել մայրաքաղաքի ամենապատուաւոր դրամատէրերուն. Ազգ. Կեդր. Վարչութեան և Կառավարութեան անմիջական հակակշիռ տակ:

Այսպէսով տասը տարուան մէջ բաղադրեալ տոկոսներով ազգը իր տրամադրութեան տակ կ'ունենայ մօտաւորապէս չորս հարիւր հազար ոսկիի պատկառելի գումար մը, որով կարելի է առ նուազն 20000 հատ համալսարան և կամ ԲՍԱՆ հատ երկրորդական վարժարաններ բանալ թուրքիոյ զանազան հայաշատ կեդրոններու մէջ. և եթէ սոյն ծրագիրը նոր տարիէն իսկ գործադրութեան դրուի, կրնանք այժմէն պարծենալ թէ քսան տարի ետք պիտի ունենանք ԼՈՒՍԱԽՈՐ ԵՒ ԳԻՏԱԿԻՑ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ:

Օ՞ն ուրեմն գործի:

ՅԱԿՈԲ Ղ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

(*) Գոյացած դրամը կրնայ յանձնուիլ Հայ Բարեգործական Ընդհ. Լիիութեան վարչութեան, որ երաշխաւորեալ հաստատութիւն մըն է Եզիպտոսի մէջ, հիմնադիր Վահմ. Պողոս փառա նուպարի և ուրիշ ականաւոր հայ անձնաւորութեանց վարչութեան ներքեւ. ամենէն յարմարագոյն տեղն է կարծեմ. և արդէն այդ հաստատութեան նպատակին գլխաւոր մէկ մասը կը կազմէ այս առաջարկը:

Ծ. Խ.

ԴՐԱՆՏ—Կրթական գործը ամենէն կենսական հարցն է, և ամէն անհատին առաջին նուիրական պարտականութիւնն է ուժ տալ դաստիարակութեան նուիրագործութիւն։ Մեր ազգին մատղաշ սերունդին տրուած լաւագոյն դաստիարակութեամբն է որ ազգը պիտի հասնի յառաջդիմութեան և զարգացման բաղձացուած կէտին։ Ազատութեան այս բարեբաւորիկ շրջանին իւրաքանչիւր պարտաճանաչ անհատին պարտքն է իր կրցածն ընել, քանի որ ալ կաշկանդուած չիկայ խորհելու, խօսելու և կատարելու ինչ որ օգտակար է ազգին, հայրենիքին ու մարդկութեան։ Յօդուածագիր բարեկամին այս ազգօգուտ առաջարկը արժանի է ուշադրութեան, նպատակն ու թելադրութիւնը յոյժ բարի է։ Առաջադրուածը անիրականալի առաջարկ մը չէ, ոչ ալ դժուարին գործ. կամք և ջանք ու նախաձեռնութիւն պէտք է։ Բարեգործութեան ու յեղափոխութեան անունով հազարներ տրուեցան, թերեւս անոնցմէ շատեր չի ծառայեցին իրենց բուն նպատակին։ չեմ կարծեր որ ազգն՝ այսօրինակ ազգօգուտ գովելի առաջարկի մը հանգէպ անճրկի, ձեռնպահ ու անտարբեր մնայ։ Աւելորդ է շեշտել մեր կրթական գործին խեղճութիւնը և աննախանձելի վիճակը։ Հեշտ և դիւրամտ չելի առաջարկ մէ այս, իւրաքանչիւր տուն այսքան զոհողութիւն կրնայ ընել, նոյն ինքն իր ազգին գաւակներուն դաստիարակութեանը համար։ Ջնջին գումար մըն է առաջարկուածը։ Ամէն օր Բագոտտուններու մէջ հազարներ յաւաքէտ կը մտնուին, թող ուրիշ քմահաճոյքներու համար մտնուածները, անհատներ կան որ մէկ օրուան, մէկ գիշերուան մէջ կը վատնեն ինչ որ մէկ տարուան մէջ պիտի յատկացնեն կրթական կենսական սոյն գործին համար։ Առաջարկը կրնայ բարեփոխուիլ, և կրնայ աւելի գործնական կոռուանի վրայ դրուիլ, պարզ և բացայայտ է նպատակը սակայն, որուն իրականացման գործը Ազգային Ժողովին ու Ազգին անհատներուն լուրջ ուշադրութեանը կը յանձնարարենք։



ԳԱՐԻՅՈՒՆ Ը ՔԻՐԱՄԱ

Իշթէ քիւլլիյէն եէնի պիր մէպտէ թահթընտա «Դրախս» նամընտա եէնի պիր ճէրիտէ մէյտանը ինթիշարա չըզտը : Անտէ չօճուգլարըն թալիմ ու թէրպիյէպինտէն , միւլահազաթը ախլագիյէ վէ էտէպիյաթտան , իւլումը պէտիյէ վէ ֆինուընը միւթէնէվիյէտէն վէ գըսմէնտէ սիյասիյաթտան պահա օլունաճաղընտան , հէր սին ու սալտան օլանլարա էզ հէր ճիհէթ իսթիֆատէլի պուլունտըղընը խապէր վէրմէք վազիֆէսիյլէ միւթէլլէֆ վէ միւֆթէխիր պուլունույօրում :

Դրախս էրմէնիճէ վէ թիւրքճէ , հէր իքի լիսանտան մախլութ պուլունարադ իքի ճիհէթտէն տէ գարիյունըն մէնֆաաթընը մուճիպ օլաճագ աըր :

Պաշըճա , թալէպէկեանըն վէ կէնճլէրին թէհզիպի ախլագընա վէ թէգատտիւմիւնէ խատիւմ , պէօյիւքլէրին վէ քիւչիւքլէրին միգաճ վէ մէգագընա միւստիտ պուլունան պու նէվ պիր դագէթայա իհթիյաճ մէսս օլունմագաա իտիյինտէն , իշթէ պու կիւն ճէնապը Հազգ , ֆէյիազը մութլագ հազրէթլէրինին ալլ ու ինսյէթլիյլէ անը նէշրէ մուվաֆֆագ օլույօրուզ :

Պու տիյարտա անասըրը մուխթէլիֆէ պէյնիտէ իթթիֆագ վէ իթթիհատըն , թալիմ ու թէրպիյէ ի ախլագիյէնին էհէմիյէթինի , մուհապպէթ վէ ճիտտիյէթին հուսուընը թէյիտ էտէն , գրաաթըն թէամմիւմիւնիւն էլգէմիյէթինի թէքիտ էտէն վէ ալ էլ խուսուս միւք ու միլլէթ վէ վաթանա ֆաիտէլի ալի մագաստլարըն գուվվէտէն ֆիլլէ իխրաճընա տաիր միւշէվիլիզ պիր ճէրիտէ տիր պու :

Պինսէն ալէյհ , իշպու Դրախստան հէր պիր խանէտէ վէ հէր պիր մէքթէպտէ պիրէր տանէ պուլունմասը ֆարզը մութլագ տըր :

Էյ գարիյունը քերում , մուխալէսէթ վէ հիասիյաթը մէսրիֆիէրվէրանէնիզէ պիշթիպահ պուլունտըղըմտան , էվլատը վաթանըն միւքթէնէպաթը իլմիյէսինէ մուսվէնէթ վէ շու թէշէպպիւսաթըմըզ տա պիզի լութֆէն թէշվիզ վէ թէրդիպ պուլուրմանըզ իշիւն իշպու ճէրիտէտէն հէր տէֆա սաթուն ալմանըզ վէ ապօնէ հաղըլմանըզ պիլխասսա ըէճա

օլունուր, իսթանպօլտա օլանլար հէր տէֆտաւնտա 40 փարա
փէշին վերիպ ալանագլար, սէնէվի փէշին ապօնէ պէտէլի
թալէպի ուսուլըմըզ հօգ տըր, անճագ թաշրաւարտա վէ
ուզագլարտա պուլունանլար իւշ այտան իւշ այա ապօնէ
եազըլըպ 13 դր. փէշին վէրմէյէ մէճպուր տըրլար:

Ղազէթամըլըն իւք սիթունլարընտա մէսլէք, մէպտէ,
մագսէտ վէ շէրաիթիմիզէ տաիւր էրմէնիճէ տահա մուֆտա-
սալ եազըլըմըզ օլտուղընտան իսթէյէնլէրին՝ կէնիշ մալիւմաթ
իսթիհասալը իշիւն օրայա միւրաճաաթլարը թաւսիյէ օլունուր:

Պրախս ղազէթասը սահիպ ի իմթիյազը
վէ միւսիւր ր մեսուլը
ԿԴԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ

ԼԱԳԳՅԱՆ ԽՍԹԽՍՏԱՏ

ԵԷթիւմէ՞զ մի արթըզ

Մէրհամէթ, շէֆգաթ, սէնտէ տիւր, հա՛ Րապպ,
Սէնսիզ գալտըզճա իշիմիզ խարապ,
Սաղտա վէ սօլտա աչըզ տըր կիրտապ,
Չէքիլէն պունճա, միհնէթ, իզթիրապ
Եէթիւմէ՞զ մի արթըզ:

Լութֆընլա բէֆ էթ հէր իզթիշաշը,
Պիզտէքի մէրազ, գօրգու թէլաշը,
Տէօքիւլէն պունճա աճը կէօզ եաշը,
Էրիտիյօր ա՛հ, թօփրաղը, թաշը,
Եէթիւմէ՞զ մի արթըզ:


Պին մազլուսիյին ֆէրիատ, ֆիղանը,
Տօլտո՞ւրմատը մը, շու ասիւմանը,
Լութֆ էթ, սէմատան էնտիւր ֆէրմանը,
Սապիւ, սիւպիանըն տէօքիւլէն գանը
Եէթիւմէ՞զ մի արթըզ:

Պիղէ պախչ էյլէ, իրֆան վէ իտրաք,
Քի տէֆ օլունսուն պիրուտէթ, նիֆագ,
էտէլիմ ճիտտէն, ըուհէն իթթիֆագ.
Լաքին, «էն տէ էթ հագգըմըղը հագգ
Եէթիլմէ՞զ մի արթըգ:

Նէ՞ վագթա գատար պէօյլէ տէրպէտէր,
Գալաճաղըզ հէփ, մէյուս, միւքէտտէր.
Պու Նէ՞ թագսիրաթ, պու Նէ՞ մուգատտէր,
Գըլ պիղի իրչատ, մէսուտ, մուսամէր
Եէթիլմէ՞զ մի արթըգ:

Պունտան պէօյլէ ֆարզ, «էպաթ, իթթիհատ,
Րէվա կէօրիւլմէզ, ա՛սլա, իրթիտատ,
Մուին օլ պիղէ, «էն տէ էթ խմատ,
Կէրի տէճնմէսին մէլուն իսթիպտատ.
Եէթիլմէ՞զ մի արթըգ:

ԿԼԵՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ



ԱԿՓԱԻՓ Ի ԻՊՐԷՓՆԻԱՄԱ

Այազ իյէ իգրար, եախօս պիր լասքիֆի եալան.— Հե-
րակէսին հիյնի վէֆաթընտա, փիլոկտեա՝ անըն մէզարընըն
հէրինի հիչ պիր քիմսէյէ խապէր վէրմէյէճէյինի՝ անըն իպ-
րամը իւզէրինէ վատ էթտի, Րուվարըն իճպար վէ իհանը
իւզէրինէ, պիւլէնտ ալազ իլէ, «Անըն Նէ՞րէյէ տէֆն օլուն.
տըղընը պիլմէմ» տէտիյի անտէ՝ տիկէր թարաֆտան տէֆն
օլունադըն հէրէ ոյաղընը շիտտէթլէ վուրմասըյլա՝ աղըզ իլէ
ինքեար էթտիյինի ալազ իլէ իգրար էթտի:

Իւչ դայր ք ցաթըգլար.— Աթինալը Կիմոն, Ողիմպիոս
օյունլարընտա Նախ ի միւքեաֆաթ օլան իքի գաթըրլարը
իչիւն՝ հէման քէնտի գապրը իթթիալինտէ պիրէր գապր
տահա թէհիյէ էյլէտի. ալամմը Նաա՝ անըն իչիւն ոճնրա-
տան պիհագգին «Պու մահալաէ իւչ հայվան տէֆն օլունմուչ
տըր, եանի, իքի գաթըր իլէ պիր տէ սահիպի» տէտի:

Պիր արփայր՝ պիր էլմասա տեյիմէյէն . — Եզովբոսըն խօ-
րօզը՝ կիւպրէ իշինտէ պիր էլմասա պուլտըլը վագթ շէօյլէ
էօթմիւշ . «Կու կու լիք կո՛ւ, կուկ կու կու կու լիք կո՛ւ,»
Եզովբոսըն թէրճէմէ վէ թէֆսիրինճէ պու «էօզ Պու էլմաս
եէրինէ քհաշքի պիր արփա թանէսի պուլա խտիմ» տէմէք
իմիշ :

Իբի ճեվ քեֆսիր, Եախօտ տեֆէ կեյմէյէն պիր կեճն . —
Բիաս, էվէնմէքտէն վագ կէշմէսի իշին պիր կէնճի շու
Խօլտա գանտըրմադա չալըշտը, «Էկէր չիրքին պիր գարը ալ-
սան, սանա խօշ կէօրիւնմէյէնէք, վէ էկէր կիւզէլ ալսան
պաշգասընա խօշ կէօրիւնմէնէք» պուսա ճէվապէն կէնճ «Է-
ֆէնտիմ, կիւզէլ օլուրսա պանա խօշ կէօրիւնսիւն, չիրքին
օլուրսա սաիրլէրէ նախօշ կէօրիւնսիւն» ճէվապը պատէվա-
պընը վէրմիշ տիր :

Քեվֆեպլիւր հագգընթա կեօնակեօն Էֆեհար . — Էշի շէն-
մէշրէպտէն պիրի՝ «Քէվքէպլէր՝ Ալլաշն սէմօվի հէյքէլի-
նին գանտիլէրի տիր» տէմիշ :

Էշի իւֆի պէտիտէն պիրի՝ «Քէվքէպլէր՝ տիւնհամըզըն
չաաըրընըն սըրմալը էլ իշլէմէլէրի տիր» տէմիշ :

Քէյֆ էշինին պիրի տէ՝ «Քէվքէպլէր՝ Ճէննէթ ի Ալիյէ-
նին սօլկոււն չիշէքլէրի տիր» տէմիշ :

Էշի իւմի ըրֆանտան պիրի՝ «Քէվքէպլէր՝ սէվամի
Արգօսըն՝ կէնէլէյին ինսանլարը հիմայէ գըլան կէօլէրի
տիր» տէմիշ :

Մաթէմգէտէնին պիրի՝ «Քէվքէպլէր՝ աֆիթապը ճիհան-
թապըն ճէնազէ ալայընըն մաթէմլի ափիգէլէրի տիր» տէմիշ :

Մուզհիքին պիրի՝ «Քէվքէպլէր՝ կէնէլէյին կէշթ ու
կիւզար էտէն իւահլարըն ֆէնարլէրի տիր» Խախօտ, «Քէվ-
քէպլէր՝ կիւնէշին հավալիսինտէն տիւշէն գըզըլճըմար տըր»
տէմիշ :

ՏԷՎՐ Ի ԻՍԹԻՊՏԱՏՏԱՆ ՊԻՐ ԽԱԹԸՐԷ Ի ՄՈՒԶԼԻՍԷ

Զիյրտէ գօնուլան հիքհայէ փէք ճալիպ ի տըգգաթ տըր,
տէվր ի խթիպտատտա տէֆաթէն հապսա իլգա օլունուպ
փէք չօգ էգիյէթ վէ իսկէնճէլէրէ կիրիֆթար օլմուշ օլան
պիր տիշճինին զարիպ սէրկիւզէլթի տիր, իշպու հիքհայէ

տէվր ի խթկատատտան պիր նիմունէ հալինտէ էնգարը ամ-
մէնին տրգգաթընա հէվալէ օլունուր: Միւմախլէյ տիշնի
սէրկիւզէյ ինի պիւլէ նագլ ու հիքնայէ էթմիշ օլուպ պիզ
տէ քէմալը մէրազ վէ տրգգաթլա խթիմա էթտիքտէն սօնրա
ոատադաթլա ֆապաթ մուլթաաարէն գալէմէ ալըպ գարի-
յունը քիրամըմըզա թագտիմ էտիյօրուզ: Մայմուցը քիւնի
թէմիլէ օլունմատընըն էսպապ ու հիքմէթի իլէրիտէ հի-
քնայէնին տէվամընտա, պէյան օլունաճագ տըր: Իշպու միւ-
լէթփէրվէր մէշուր տիշնի տօթումուզուն քիմ օլտուզընը
սապր էտինիզ, պատէհու պիւտիրիւրիզ:

ՄԱՅՄՈՒՆԸ ՏԻՃՔԻՆԻՆ ՍԵՐԿԻԻՋԵՇԹԻ

ՊէնՏէնիՉ 20 սէնէտէն պէրու տիշ թէպապէթիլէ իշ-
թիդալ էթմէքտէ պուլունույօրում: Պաղտատտա պիր
միւտտէթ գալտրգտան սօնրա պէրայ ի սէնաաթ Եօզդատա
կէլիպ իքի պուշըզ մահ գատաւրտա օրատա իճրա ի սանաաթ
էթմէքտէ պուլունտրմիւֆտա մէսէլէսի սէպէպինտէնտախիլի
փօլիթիգանըն ֆէվզ էլատէ պօզուլմաալլա Եօզդատ էրսէնի
ճէմաաթընըն տիւշարը տէհէթ օլտուզընը պիլ միւշահէտէ.
օրատա գալըր իսէմ տէյիլ մահգա սէնաաթճա խթիֆատէ
էթմէ յէճէյիմի իլլա տահա զիյատէ, պաշգա եիւզլէրճէ պիսուշ
վէ պիկիւնահ քիմիւլէր կիպի, պէնիմ հայաթըմընտա պէհէ-
մէհալ թէհլիքէյէ մարուզ օլաճաղընը հէք նագարտա ֆէհմ
ու իտրաք էթտիլիմտէն՝ օրատան հէման էշեամը թօփլայըպ
թօփարլայըպ. սաւուշուպ էնգարէյէ ազիմէթ իտէր իքէն
Եօզդատտան թագրիպէն 5 սաաթ պուտը մէսաֆէտէ պուլու-
նան Սարայ նամ գարիյէյէ տախիլ օլտուզըմտա, պէնի թաագի-
պէ մէմուր օլան փօլիլէր թարաֆընտան տէրտէսթ օլունուպ
Եօզդատա կէրի կէթիւրիւտիմ, վէ միւվասէլէթիմտէ Եաֆթա
մէսէլէի մալիւմէսինտէն տօլայը վէ քէզա, Եօզդատտա հիւ-
քիւմէթ թարաֆընտան աշլըպ օզունան մէքթուպլար, թէվ-
գիֆ էտիլէն շիքնայէթամիզ թէլէկրաֆլար իշիւն, կէօյա
Եօզդատ էրմէնիլէրի թարաֆընտան իսթանպօլա մահգէր
կէօթիւրիւյօրում թէօհմէթիլէ տէրտէսթ օլունմուշ օլտու-
զումը անլատըմ:

Շուրաաընը պէր վէճհ ի փէշին արզ էտէյիմքի,

հաճախ մէսէլէսի միւլապէսէսիլէ ուսում թիւրքլէրին էլինէ պէօլիւք ֆուրսաթ կէչմիշ օլուպ, կէրէք մէսու-րին ի հիւքիւմէթտէն օլանլար վէ կէրէք մէմէքէթին միւթէհայրիզանընտան պուլունանլար, էրմէնիլէրտէն էօճ ալմագ գաստըլա պին պիր պէհանէլէր ույտուրուպ նիշէլէ-րինտէն քիւլիյէթլի փարալար գօփարտըգտան ոօնրա միւ-թէպէրանը միլլէթտէն պուլունանլարա պէնիմ կիպի զարիպ սէնաաթքեսարլարը քէնտի մէթալիպ ի միւթէնէվլիյէ-լէրինէ մուվաֆազաթ էթմէտիյիմիզ իշիւն, աստվէթլէրին-տէն նաշի, շու հա պու միւֆթէրիյաթ վէ իսնատաթ իլէ հապս էթտիրմիշլէր տիր, Օլ հաճախ զէմանընտա սայքի հէր շէհրտէ պէօլէ հափտըգլարը կիպի, Խօզդատ վէ Գայրէ-րիյէտէ պու նէվտէն պիր չօգ էշրաֆ ը միլլէթտէն պիսուշ էրմէնիլէր, պիզայր ի հազգին թէվգիֆ էտիլէրէք զգիյէթ, տի-յասէթ վէ իսկէնճէլէրէ տիւշար օլմուշլար տիր:

Լիսան ը մատէրիմ թիւրքճէ օլուպ, հէմ տախի հապ էլ վազիֆէ տախիմ թիւրքճէ թէքէլլիւմ էթտիյիմ իշիւն իլք տէֆա պէնտէնիզի հէր քէս թիւրք զանն էթմիշ իսէտէ, պիր կիւն քիլիսէտէն չըգտըղմը կէօրէն թիւրքլէր «Պու տա կեափուր իմիշ» տէյիւ արթըգ ֆէնա նազար իլէ պագմաղա պաշլամըշլար իտի:


Տէրտէսթէն կէթիրիլիպ հապսխանէյէ տէլալէթ օլուն-տըղըմտա, պէնի թանըյան պիր փօլիոտէն իմտատ վէ մէրհամէթ պէքլէր իքէն, պիլաքի», «Սէն տէ մի Գօմիթէյէ տախիլսին» տէյերէք թօգաթլա թօգաըլայա հապսխանէյէ ոօգմուշ տըր:

Ղարտիյան պէնի կէթիւրիւպ, փօլիս թապիր օլունան անճագ պիր ատէմին այագտա տուրապիլէճէյի գտտար, ուզունճա ֆազաթ զայէթ տար վէ գարանլըգ պիր մահալէ վազ էյլէտի: Օրատա իխթիլաթտան մէն օլունարագ 5 կիւն գալտըմ, վէ լաքին օ մահալ վէ օ վագթտաքի պէշ կիւն-լիւք էօմրիւմ, պանա պէշ սէնէտէն զիյատէ հիւքմ վէրտիյի շիւպհէտէն միւսթաղնի տիր: Օ նէմնաք վէ տարաճըգ մա-հալտէ զաթէն ինսան սէրպէսթ աղըպ տէօնէմէզ իքէն, պիր տէ ալ սանա 18 օգգալըգ պիր զինճիրլի տէմիր, օնու տա այաղըմա վուրտուլար:

Պիր գաշ կիւն ոօնրա մուհաքէմէմիզ ճէրէյան էտիպ, իսթինթագըմտա, անլա պիր գօմիթէյէ տախիլ օլմատըղըմ վէ հաճախ վէ պուլնարա միւմասիլ մէսէլէլէրէ զիմէտիսէլ պուլունանտըղըմ մալիւմ օլմուշ իքէն, պիր պաշգա կիւն թէքրար մուհաքէմէյէ ճէլպ օլունտըղըմտա, պու քէրրէ 7-8 տանէ հալանճը շահիտլէրին զուհուր էթտիյինի քէմալ ը թէաճճիւպլէ կէօրտիւմ: Պուլար քէնտի իֆատէլէրինտէ,

պէնիմ ֆէզահաթ Ը լիսանիյէտէ պուլունտըղմը իսպաթա
ճիւրաթ էթմէլէրիլէ, պիւ իթթիֆադ սէօլէտիքլէրի սէօզ-
լէր սալթ իւչ լուղէթտէն իպարէթ պուլունույօր իտի, «Ֆե-
զահաթ Ը լիսանիյէսէ պուլունսու:»

Ճէզա րէիսի պէնտէնիզէ խիթապէն. «Նէ՞ տէրսին պու
գաստար շահիտլէրին տէտիքլէրինէ» տէլիւ սիւալ էթտի իսէ
պէնտէնիլ, «էֆէնտիմ, հէր պիրիսինէ այրը այրը «Ֆէզա-
հաթ Ը լիսանիյէ» Նէ՞ տէմէք օլտուղընը սիւալ էթմէնիզի,
վէ անլէրտէն ճէվապ վէրիլմէսինի թալէպ էտէրիմ» տէտիմ:
Պուսլար շաշլըրպ սաշմալայադազ «Ֆէզահաթ Ը լիսանիյէ»
իշթէ ֆէզահաթ Ը լիսանիյէ տէմէք տիր տէտիլէր իսէտէ,
անլէրտէն պիրիսի էֆէնտիմ պու սէօզլէրի պիլզէ էօյրէթ-
տիքլէրի զէման մանազընը էօյրէթմէտիլէր, տէմէսինի միւ-
թէագըպ, սամիյունըն գահգահա իլէ կիւտիւքլէրի սըրա-
տա, րէիս պու սօնրաքի շահիտէ «Տըշարը չըզ սէնի կիտի
հէրկէլէ» տէյէրէք գօվտուգլարը կիպի, «Պուսլարը քիմէ՞ր
թէնպիլիլէմիշ տիր» տէյիւ էթտիլիմ սիւալ իւղէրինէ, էհա-
լինին թէպէսսիւմլէրի արասընտա պէնի թէքորար թէվգիֆ-
իսանէյէ տէլալէթ էթմիշլէր տիր: (Տեվամի)



«ԴՐԱԽՏ»-ԻՆ ՎԷՊԸ ԻՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Ասաջիկայ երկրորդ թիւով պիտի սկսինք խիստ տպա-
ւորիչ, հետաքրքրաշարժ ու մանաւանդ դարձարձիկ փու-
լիւով անօրինակ կերպով սրտառուչ վէպ մը: Բաւ է ըսել
թէ, այս վէպը անգլիական գլուխ գործոցներէն մին է, զոր
թուրքերէնի թարգմանելու բարեհաճութիւնն ունեցած է—
գահողութիւնը պիտի ըսէի, որովհետեւ հոյակապ գործ մըն
է—Անգլիագէտ ծանօթ Վիրաբոյժ-բժիշկ Ազն. Աւետիս էֆ.
Նազգաշեան, և մենք ալ իր բարեհաճ թոյլտուութեամբ
հայացնելով կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Վէպին հերոսն է ազնուական դասակարգէն գեղանի կին
մը, Լէյտի իզապէլ անուն, բայց ընտանեկան սրբութեան
դէմ մեղանշելուն պիտի տեսնէք թէ ի՞նչ թոյն-դաշինական
վիճակ մը ստեղծած է իրեն համար: Նոյնպէս վեպը կը դառ-
նայ ուրիշ գեղի և վաւաշ մարդու մը շուրջ, սա եզակիանօ-
րէն նշանաւոր ոճրագործ մըն է միանգամայն: Կը փնտռուի,
բայց չի գտնուիր, մինչդեռ իւրոյ աշխարհի ժուռ կուգայ,
ու այնպիսի մէկն է որ, ո՛չ ոք կընայ մտքէն անցունել թէ,
ոճրագործ կընայ ըլլալ: Վերջի վերջոյ օձիքը ձեռք պիտի
տայ սակայն: Արդարութիւնը երեւան պիտի գայ:

Այս անակնկալ վեպը թող կարդան օրիորդներ, երիտասարդներ, կիներ և աղբեր, տեսնելու համար թէ, մեղանչող ու ընտանեկան յարկը լքող կնկան մը գլուխը ինչեր կրնան գալ:

Վեպը համակ բարոյացուցիչ հանգամանք մը ունի դաս առնել փափաքողներուն համար: Անգլիական ճաշակով հրաւիրուած սիրային վեպի մը ճաշակին ալ նայեցէք: Սակայն չի մոռնամ ըսելու թէ, քովերնիդ աւելորդ թաշկինակներ պահեցէք, հետզհետէ սրտատուչոր և հոգեցունց դարձող անզուգական վէպի մը ի տես ձեր աչքի արցունքները սրբելու համար:

ՀԱՆԵԼՈՒԿ

ՔԱՌԱՏԱՌ ԵՒ ՔԱՌԱՆԿԻՒՆ

. . . ն
. . . ն
. ն . .
ն . . .

Առաջին բառըս պատկան ամենուն,
երկրորդը՝ գողտրիկ մի ծանօթ անուն,
երրորդը կից է ողջին կենդանեաց,
Առանց անոր մենք անշունչ արարած,
Չորրորդըս խաղ մ'է շատ ընդհանրացած,
Կը խաղան մարդիկ դէմ առ դէմ կեցած:
Երբ ողջ չարս բառեր իրարու մօտ գան,
Տղաքներն ալ գայն գիւրաւ կը կարդան:

ՄԵՂԿ

Աթիտէքի սըֆըրլար իլէ նօգթալարըն հէրլէրինէ լազըմ օլան եազըլարը գօտըղընըղտա հէր պիր լուղէթի հէր իքի թարաֆտան օգուլաճագսընըզ. սըֆըրլարըն հէրլէրինէ գօնաճագ օլան հարֆլար այնի հարֆլար տըր: Նէ տիր պու թիւրքճէ լուղէթլէր:

0	ա	.	ա	0
0	ա	.	ա	0
0	ա	.	ա	0
0	ա	.	ա	0
0	ա	.	ա	0

Իշպու պիւճէճէրին հէր իքիսինիտէ հալլ էտէնլէր եաւըղըլը քարթօն իւզէրլինտէ մաթպու պիրէր չիր հէտիյէ աւաճագլար տըր:

Հէր քիմ պիղէ էրմէնիճէ վէ թիւրքճէ կիւզէ պիւմէճէլէր կէօնտէրէճէք օլուրսա, ղազէթամըղա մէմնունիյէթլէ տէրճ էտէրիզ:

ՏՕԳԹՕՐ Տ. ԹԱՊԻՊԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ—ԲԺԻՇԿ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՄԱՍՆԱԳԷՏ

Կը դարմանէ ի մասնաւորի՝ կուրծքի, սրտի, ստամոքսի, աղեթափութեան, միզարգելութեան հիւանդութիւնները, մոռ-թային ախտերը, ջերմամիզութիւնը, հին և նոր ֆրանկախտը, գանգերը:

Հիւանդ կ'ընդունի Շիշլի Անանեան Ափարթման իր տա-նը մէջ մինչեւ կէս օր: Բաց ի կիրակիէ և Հինգշաբթիէ կէս օրէ ետք կը գտնուի Պոլիս Նոր Նամակատան դիմաց Ֆէրուխ Պէյ իման, իր մասնաւոր դարմանատանը մէջ: Հինգշաբթի կէս օրէ ետք Գատը գիւղ, Փաղար Ճատտէսի, Ստափրի Նի-գօլարտիս էֆ.ի Դեղարանը: Ուրբաթ օրերը ձրի:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Վ. ԿԵՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ԿԷՏԻԿ ՓԱՇԱ—ՊԱԼԻ ՓԱՇԱ ԵՕԳՈՒՇՈՒ, Կ. ՊՈԼԻՍ

Այս դեղարանը որ սուղ ժամանակի մը մէջ հասարա-կութեան վստահութեանը արժանացաւ, մասնաւորապէս դեղերուն խիստ թարմութեանը, դեղագիրներու ճշգրիտ պատրաստութեանը, և ցոյց տուած ուղղամտութեանը հա-մար, այս անգամ իր բոլոր յաճախորդները գոհ ձգելու նը-պատակով և յարգոյ հասարակութեան քաջալերութեանը վրայ, ինչպէս ուրիշ տարիներ, նոյնպէս այս տարի Նորվե-կիայէն մեծաքանակ բերել տուած է

ՄՕՐԻԻԻ ԱՆԱՐԱՏ ԶԿԱՆ ԻԻԴԸ

ՈՐ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԻՄՆԱԳԷՏՆԵՐԷՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԻ ԲԺԻՇԿՆԵՐԷՆ ԳՆՆՈՒԱԾ ՈՒ ԱՆԵԱՐԳԱԽ ԸԼԱԼԸ ՎԱ-ԻՆԵՐԱՑՈՒԱԾ Է:

ՄՕՐԻԻԻ ձկան իւղը կը ծախուի մեծ ու փոքր քանա-կութեամբ մասնաւոր շիշերու մէջ: Կէտիկ Փաշա—Պալի Փաշա դեղարանը կը գտնուին նաեւ ամէն ահսակէ մեծ քա-նակութեամբ քօնեաքներ, օ տը քօլօններ և անգլիական ու գաղիական դեղերու մթերք մը:

ՎԱՀՐԱՄ ԱՍՍՏՈՒՐԵԱՆԻ դեղարանը, յաճախորդներուն փափաքին համաձայն, ի դիւրութիւն, կը հրաւիրուի ուզուած բժիշկը: Այս դեղարանը կը յաճախեն արդէն փորձ ու կարող բժիշկներ, որոնք դեղարանին յարակից մասնասէնեակին մէջ կը դարմանեն ամէն տեսակ հիւանդութիւններ: Բշ. և Եշ. օրերը ձրի դարմանում, կէս օրէ վերջ:

Դ Ե Ղ Ա Ր Ա Ն Ը Ո Ւ Ն Ի

Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Ս Պ Ա Ս

§ Տեղի անձկութեան պատճառաւ չի կրցինք դնել այս անգամ ԼՐԱՒԱՂինս :

§ Մեր գործակալները հաճին իմաց տալ մեզի թէ, ամէն ատեն որչափ ԴՐԱՅ կրնան սպառել :

§ Գործակալներու անուանները երկրորդ թիւով :

ՇԱՅՍՆ Ը ՏՐԳՄԱԹ ՊԻՐ ԻԼԱՆ

Գրասէտէն հիտէ 10 զր. սայքի տիւքէնմիշ տիր : Միւլահազթ ը ախլազիյէ նամ քիթապ 6 զր. եալաղլը էլ վան քարթօն իւզէրինտէ մաթպու կիւզէլ պիր շիրին հէր պիր թանէսի 20 փարա, պու շիր երլ պաշը միւնառէպէթիյլէ եէկտիկէրէ վէ խուսուսիյլէ չօճուգլարա հէտիյէ վէրմէք իչիւն չօգ միւնասիպ տիր : Պունտան մատա, պու սօն իքի էսէրլէր, եանի, միւլահազաթ իլէ եալաղլը շիր՝ Ատանա միւհթաճիյնի մէնֆաթիւնա սաթըլաճապ վէ փարասընըն նըսֆը օ մագսէտ իչիւն փաթրիքիտանէյէ թարաֆըմըզտան թէյլիմ օլունուպ ալաղլըմըզ իլմ ու խապէրի պու ղազէթաւ տա իլան էտէճէյիզ : Մուգատտէմա պու մագսէտէ սաթաղլըմըզ էրմէնիճէ իքի քիթապլար իչիւն, փաթրիք Սրգազանըն իմգասը թահթընտա ալաղլըմըզ իլմ ու խապէրլէր եէտիմիզտէ մէվճուտ տըր : Հէմ պու էսէրլէրին միւնտէրէճաթընտան իսթիֆատէ էթմէք, հէմ տէ պախուսուս ֆէլէքէտէքեանա իսնէ վէրմէք իսթէյէնլէր, անլէրի իշթիրա իչիւն «Դիսիս» ղազէթասը խաարէխանէսինէ միւրաճաաթ էթմէլի տիրլէր : Պապ ը Ալի ճատտէսի, Պէրպէրեան մաթպասաղ Ն. 38 :

ՏՈՔԹ. ՊՕՂՈՍ Ի. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Բժիշկ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի

Կը դարմանէ արանց և կանանց ներքին և արտաքին հիւանդութիւններ, ինչպէս նաեւ ջերմամիզութիւն և գաղական ախտը բժշկական նորագոյն դրութեամբ :

Բաց ի Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէ, ամէն օր կէս օրէն վերջ կը գտնուի իր բնակարանը Կէտիկ-Բաշա Ատաւ սուրհան գեղարանին գիմացը Միւսէլլիմ փողոց թիւ 6 :

Երկուշաբթի ժամը 8-10 Վահրամ էֆ. Ասատուրեանի Կեդրոնական Դեղարանին մէջ, և Հինգշաբթի ժամը 8-10 Գուլ-Գարու Ատանայի Դեղարանին մէջ, Զրիապէս կը դարմանէ աղքատ հիւանդները :

ՏՕՔԹ Յ. ՍՈՒՃԵԱՆ,

Էմրաղ ը պէվիյէ, թէնասիւլիյէ վէ էմրաղ ը տախիլիյէ միւթէխասիսի, էսքի վէ եէնի պէլ սօղուգլուղը վէ ֆրէնկի վէ պէօպրէք վէ մէսանէ վէ էմա վէ միտէ խասթալըզլարընը ղայէթ սէրի վէ եէնի ուսուլ իւզրէ թէտազի էտէր :

Հէր կիւն էօյլէնտէն սօնրա Պաղճէ Գափուսընտա Միւնասիան էֆ. էճգախանէսինտէ պուլունուր : Իլք վիզիթա մէճճանէն :